

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՐԱԿԻ (ԿԱՆԱՉ)

06 ԱՊՐԻԼ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1-2
Շարական նոր Կիրակիի	էջ 2
Բացատրութիւն նոր Կիրակիի	էջ 2-3
Շարքուայ ժամանակացոյց	էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ

«ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»

ԳՐՔԵՆ

(9.23-31)

Ժամանակ մը վերջ, Դամասկոսի հրեաները որոշեցին Սօղոսը սպաննել: Սակայն Սօղոս իմացաւ անոնց նենգութիւնը, թէ՛ գիշեր ցերեկ կը հսկէին քաղաքին դռներուն առջեւ, որպէսզի զինք սպաննեն: Ուստի հաւատացեալները զինք գիշեր մը զամբիւղի մը մէջ դնելով պարիսպէն վար իջեցուցին:

Սօղոս Երուսաղէմ եկաւ եւ կը ջանար հաւատացեալներուն հետ շփման մէջ մտնել. բայց բոլորն ալ կը վախնային իրմէ, չհաւատալով թէ Քրիստոսի աշակերտ դարձած է: Սակայն Բառնաբաս առաւ Սօղոսը, առաքեալներուն տարաւ եւ անոնց պատմեց թէ ի՛նչպէս Սօղոս ճամբուն վրայ Տէրը տեսած եւ անոր հետ խօսած է, եւ թէ ի՛նչպէս Յիսուսի անունով համարձակօրէն քարոզած է Դամասկոսի մէջ: Անկէ ետք Սօղոս առաքեալներուն հետ կը մնար ու կը շրջէր Երուսաղէմի մէջ, եւ համարձակօրէն կը քարոզէր Տէր Յիսուսի անունով: Կը խօսէր ու կը վիճէր յատկապէս յունախօս հրեաներուն հետ, որոնք զինք սպաննելու ձեւ մը կը խորհէին: Հաւատացեալ եղբայրներ երբ իմացան, Կեսարիա փախցուցին Սօղոսը, եւ հոնկէ ալ Տարսոն զրկեցին:

Եկեղեցին ամբողջ Հրէաստանի, Գալիլիայի ու Սամարիայի մէջ խաղաղութիւն կը վայելէր եւ կը զօրանար: Ս. Հոգիի օգնութեամբ հաւատացեալները կը բազմանային եւ Տիրոջ երկիւղովը կ'ապրէին:

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ

(2.1-10)

...մէկդի՛ ձգեցէք ամէն տեսակի չար մտածում ու նենգութիւն, կեղծաւորութիւն ու նախանձ եւ ամէն տեսակի չարախօսութիւն: Որպէս հաւատքի նորածին մանուկներ՝ Աստուծոյ խօսքի անխարդախ կաթին փափաքեցէք, որպէսզի անով աճիք եւ փրկութեան հասնիք: «Անգամ մը որ Տիրոջ խօսքին համը առնէք, պիտի տեսնէք թէ քաղցր է ան»: Մօտեցէ՛ք անոր, Քրիստոսի, որովհետեւ ինքն է այն կենդանի վէճը, որ թէպէտ մարդոցմէ մերժուած, բայց Աստուծմէ ընտրուած պատուական վէճն է: Այդպիսով դուք ալ որպէս կենդանի քարեր՝ Քրիստոսի վէճին վրայ կը կառուցուիք իբրեւ հոգեւոր տաճար. իւրաքանչիւրդ կը դառնաք անարատ քահանաներ եւ Յիսուսի Քրիստոսի միջոցաւ հոգեւոր ընդունելի պատարագ կը մատուցանէք Աստուծոյ:

Որովհետեւ մարգարէութեան մէջ գրուած է.

«Ահա ես Սիոնի մէջ կը դնեմ ընտրուած վէճ մը, պատուական անկիւնաքար մը. անոր հաւատացողը յուսախար պիտի չըլլայ»:

Քանի դուք հաւատացիք Քրիստոսի, անիկա ձեզի համար պատուական վէճ եղաւ. մինչդեռ չհաւատացողներուն համար անիկա “Այն քարն է, զոր թէպէտ շինողները մերժեցին գործածել, բայց յետոյ անկիւնաքար եղաւ”, կամ՝ “Այն քարն է՝ որ գլորումի եւ գայթակղութեան առիթ” պիտի ըլլայ անոնց համար որոնք Աստուծոյ խօսքը անհամոզիչ գտնելով կը գայթակղին, ինչպէս որ Աստուած նախատեսած էր:

Գալով ձեզի, դուք ընտրուած սերունդ մըն էք, թագաւորելու կոչուած քահանաներ, սրբուած նոր ազգ մը, Աստուծոյ սեփական ժողովուրդը. եւ ձեր պարտականութիւնն է քարոզել զօրութիւնը անոր՝

որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց: Որովհետեւ հիմա Աստուծոյ ժողովուրդն էք, մինչ նախապէս չէիք. հիմա իր ողորմութիւնը կը վայելէք, մինչ նախապէս գրկուած էիք անկէ:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ**

**ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ**

(2:23-3:12)

Ձատիկի տօնին, մինչ Յիսուս Երուսաղէմ կը գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները: Սակայն Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը ճանչնար եւ պէտք չունէր ոեւէ մէկուն մասին ուրիշին վկայութեան, քանի ինք գիտէր թէ ի՛նչ կայ այդ մարդուն սիրտին մէջ:

Նիկողեմոս անունով փարիսեցի մարդ մը կար, հրեայ իշխան մը, որ գիշերով Յիսուսի մօտ եկաւ եւ ըսաւ անոր. «Վարդապե՛տ, գիտե՞ք որ դուն Աստուծոյ կողմէ զրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ ոք կրնայ գործել քու կատարած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ»: Յիսուս պատասխանեց անոր. «Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»: Նիկողեմոս հարցուց անոր. «Ծեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ նորէն ծնիլ: Կարելի՞ քան է որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»: Յիսուս պատասխանեց. «Վստահ եղիր, որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար երկինքի արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ Հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ գարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է կրկին ծնիք: Հոզը ուր որ կ'ուզէ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ կու գայ եւ ուր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք հոգիէն կը ծնին»:

Նիկողեմոս հարցուց. «Ինչպէ՞ս կը պատահի ատիկա»: Յիսուս պատասխանեց. «Դուն որ Իսրայէլի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ատիկա չե՞ս գիտեր: Վստահ եղիր, թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք եւ ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայենք, բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր: Եթէ երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չհաւատացիք, ինչպէ՞ս պիտի հաւատաք ինծի եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմ»:

**ՀԱՐԱԿԱՆ  
ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ  
ԿԻՐԱԿԻ**

(Մովսէս Քերթոզ, 5-րդ դար)

Կ'երկրպագեմք քեզի, Քրիստոս, որ քանզցանք սուրբ առաքելներուն քարոզութեամբ. Տէր, Աստուածը մեր հայրերուն:

Եւ սուրբ առաքելներուն աշակերտելով՝ սորվեցանք քեզ փառաւորել սրբազան տաճարիդ մէջ, որ հիմնեցիր հաւատքի վեմին վրայ. Տէր, Աստուածը մեր հայրերուն:

Տարբեր ազգերու ժողովուրդներ, եկե՛ք, ցնծութեամբ տօնենք Սուրբ Եկեղեցւոյ ցաւակատիքը. բարեբանեմք Տէր Աստուածը մեր հայրերուն: Տէրը օրհնեցէք եւ առաւել փառաւորեցէք գայն յաւիտեան:

Անմարմին բազմութիւններուն հետ այսօր սուրբ եկեղեցի եկող Քրիստոս Թագաւորը գովեցէք բոլոր ազգեր եւ առաւել փառաւորեցէք գայն յաւիտեան:

Եկեղեցի եկէք  
Ս. Երրորդութեան հաւատացեալներ  
եւ գԱստուած օրհնեցէք.  
Սուրբ Պատարագի մատուցմամբ՝  
խնդութեան տօն կատարեցէք:



**ՅԻՆՈՒՍՔԻ ԵՐՐՈՐԴԻ ԿԻՐԱԿԻ**  
(ԾՈՒԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ - ԹԻՒ 10)

**Ժ.  
ԱՇԽԱՐՀՐԱՄԱՏՐԱՆ  
ԿԱՍ  
ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ**

- Հարցումներ.  
1.- Ինչո՞ւ Ս. Ձատիկուայ երրորդ Կիրակին «Աշխարհամատրան Կիրակի» կամ «Կանաչ Կիրակի» կը կոչուի: Ի՞նչ կը նշանակէ «Աշխարհամատուռ» եւ ինչի՞ կ'ակնարկուի: Ի՞նչ կը նշանակէ «Կանաչ Կիրակի», ինչպէ՞ս երկու անունները իրարու կ'առնչուին:  
2.- Յիշատակութիւն մը ունի՞:  
3.- Ի՞նչ կ'ըսեն Ս. Գրային ընթերցումները:

Պատասխաններ.

1.- «Աշխարհամատուռ» բառին համար «Նոր Բառգիրք»-ն կը փառք միայն հետեւեալը. արժուի տանար, երկրի կամ փառքի կեդրոնական եկեղեցի, կամ ինչպէս մենք սովոր ենք ըսել՝ «Մայր եկեղեցի»:

Օրմանեան արքեպիսկոպոս այսպէս բացատրած է. «Աշխարհամատուռ» բառը կը գործածուի իբր աշխարհաժողով բազմութեան յատկացեալ եկեղեցի, կամ լաւ եւս բոլոր աշխարհի պատկանող եկեղեցի, եւ այս անունը տրուած է Սիոնի Վերնատան՝ ուր Քրիստոս վերջին գատկական ընթրիքը կատարեց եւ հաղորդութեան խորհուրդը հաստատեց (Մկ 14.15), ուր սովորութիւն ըրին հաւաքուիլ առաքելները Քրիստոսի Համբարձումէն ետքը (ԱԳ 1.13), ուր եւ նոր հաւատացեալներուն հետ հաղորդութիւն ու աղօթք կը կատարէին առանձին (ԱԳ 2.42):»

Ներկայի ֆարոգիչները «Աշխարհամատուռ»-ով ընդհանրապէս եւ աւանդաբար կը հասկնան Վերնատունը, որ թէ՛ որովայն մըն էր եւ թէ խորհրդանշանն է Քրիստոսի Ընդհանրական եկեղեցիին:

Իսկ ուրկէ՞ «Կանաչ Կիրակի» անունը: Ի՞նչ է կապը «Աշխարհամատուռ Կիրակի» անունն հետ:

«Կանաչ» բառը անմիջականօրէն մեր մտքին մէջ կը նկարէ բնութեան արթնալու պատկերը: Եւ քանի որ Յարութեան նորոգիչ ուժին պատգամատու Նոր Կիրակիէն ետք կու գայ Կանաչ Կիրակին, ապա «Կանաչ»-ով կը խորհրդանշուի Յարութեան կենսաստեղծ գործութեան առաջին արդիւնքը: «Աշխարհամատուռ»-ին եւ «Կանաչ»-ին զուգորդութիւնն ալ մեզի կը թելադրէ Ընդհանրական եկեղեցւոյ ծնունդը Յարութեան դէպքին եւ հաւատքին վրայ: Այս հաստատումը կ'նշուի պարզել Բարբէն Կթ. Կիւլէսէրեանի լուսաբանութեամբ. «Փրկչին Յարութենէն ետքը Աւետարանը կ'անի, կը ծաւալի արագ արագ: Այսպէս է պատմութեան վկայութիւնը: Այդ երկչոտ, վատասիրտ առաքելները արիւցեք են, կրակուբոց դարձեր են, եւ Աւետարանի Դասերուն աշակերտողներուն թիւը ամէն օր կը մեծնայ ու կը բարձրանայ զարմանալի արագութեամբ մը, ինձ այնպէս կը թուի, սիրելի բարեկամս, թէ մեր նախնիք Աւետարանի առաջին եկեղեցւոյն այս անունն ու ծաւալումը նմանցուցին նորափոթ բնութեան թարմութեան, ծաւալուն անման ու կանաչացման...»:

2.- Աւանդութիւն է Աշխարհամատուռ Կիրակիին մէջ տեսնել յիշատակումը Քրիստոսի առաջին եկեղեցիին սկզբնաւորութեան: Թէ Քրիստոսի եկեղեցւոյ սկիզբը ե՞րբ եղաւ: Ոմանք Յարութենէն անմիջապէս ետք կը տեսնեն ատիկա, ուրիշներ՝ Ս. Հոգիի գալուստէն ետք: Ըստ իս, առաջին եկեղեցին կամ եկեղեցւոյ առաջին շրջանը սկսաւ Յարուցեալ Քրիստոսին հետ առաքելներուն փորձառութեամբ: Իսկ Ս. Հոգիին գալուստը այն դէպքն է, որ եկեղեցւոյ առաքելութիւնը աշխարհին բացաւ:

3.- Ս. Գրային ընթերցումներն են. Առաքելներուն Գործերը գիրքէն՝ 9.23-31. Պետրոս Առաքելի Ա. Նամակէն՝ 2.1-10. Յովհաննէսի աւետարանէն՝ 2.23-3-12:

Առաքելներուն Գործերը գիրքէն հատուածը կը պատմէ Սօղոսի Դամասկոսէ փախուստը իրեն դէմ ծրագրուած սպանութեան պատճառով: Ան կ'երթայ Երուսաղէմ եւ

կը ջանայ Քրիստոսի հետեւորդներուն հետ «չփման մէջ մտնել», «բայց բոլորն ալ կը վախճային իրմէ, չհաւատալով թէ Քրիստոսի աշակերտ դարձած է»: Բառնաբասի միջոցաւ Սօղոս կ'ընդունուի առաքելներու շրջանակին մէջ, եւ համարակօրէն կը ֆարոգէ Տէր Յիսուսի անունով: Դարձեալ զինք սպաննելու գաղափարը կ'նսնսան ոմանք: Եւ եղբայրներ զինք Կեսարիա կը փախցնեն, հոնկէ ալ Տարսուս:

Հատուածին վերջին պարբերութիւնն է, որ կը կարծեմ սեւեռման առարկան եղած է, երբ ընտրուած է որպէս մէկը այս Կիրակիի ընթերցումներուն: Ահաւասիկ պարբերութիւնը. «Եկեղեցին ամբողջ Հրէաստանի, Գալիլիայի ու Սամարիայի մէջ խաղաղութիւն կը վայելէր եւ կը գործարարէ: Ս. Հոգիի օգնութեամբ հաւատացեալները կը բազմանային եւ Տիրոջ երկիւղովը կ'ապրէին»:

Պետրոս Առաքելի Ա. Նամակէն հատուածը կը ներկայացնէ «հաւատքի նորածին մանուկներ»-ուն, այսինքն՝ հաւատացեալներուն անհրաժեշտ բարոյագիտութիւնը, եւ կոչ կ'նշուի անով անելու եւ փրկութեան հասնելու:

Առաքելը կը շեշտէ, թէ Քրիստոսի հաւատացողները որպէս «կենդանի ֆարք» Քրիստոս Վէմին վրայ կը կառուցուին եւ կը կազմեն «հոգեւոր տանար»-ը: «Հոգեւոր տանար»-ը «ընտրուած սերունդ մը»-ն է, «սրբուած նոր ազգ մը», «Աստուծոյ սեփական ժողովուրդը». անոր «պարտականութիւնն է ֆարոգել գործութիւնը» Տիրոջ, որ «խաւարէն իր սմանչելի լոյսին կանչեց» զինք ընդունողները:

Յովհաննէսի աւետարանէն ֆաղուածը Երրայական Զատիկի շրջանին մէջ կը ներկայացնէ Յիսուսը, եւ թէ «շատեր» կը հաւատային իրեն, տեսնելով անոր գործած հրաշքները: Աւետարանիչը կ'անուշանայ, սակայն, թէ Յիսուս չէր վստահեր անոնց, որովհետեւ գիտէր թէ ի՞նչ կայ մարդու սրտին մէջ: Այս տեղեկութենէն ետք, կը պատմուի Նիկողոսիմոս անունով փարիսեցի իշխանաւորի մը գիշերով հանդիպումը Յիսուսի հետ, եւ խօսակցութիւնը: Այս խօսակցութեան հիմնական գաղափարն է՝ Աստուծոյ արքայութիւնը տեսնելու համար՝ վերստին ծնելու կենսականութիւնը: Վերստին ծնելու գաղափարը վերջին դարուն բաւական չարչարուած է: Ատով յայտնուող Յիսուսի միտք բանին այն է, թէ Աստուծոյ արքայութիւնը տեսնելու շնորհքը արդիւնքն է մարդկային ճիշդ, վերստին ծնունդը՝ վերէն կամ երկինքէն ծնունդն է:

Ինչպէ՞ս է, որ երեք հատուածները իրարու կը կապուին: Յստակօրէն անոնք «եկեղեցի» հասկացողութեան կ'անուշանան: Պատասխաններ կու տան եկեղեցւոյ էութեան, բուն ինչութեան, եւ ընելիքին մասին:

Եկեղեցւոյ էութիւնը աստուածային է, անոր բուն ինչութիւնը նիւթական կառոյցը կամ հաստատութիւնը չէ, այլ՝ «հոգեւոր տանար»-ը (որ թէ՛ Քրիստոսի վրայ հաւատք է, եւ թէ՛ ըստ այդ հաւատքին անհատական եւ հաւաքական մաքուր կեանքի կերպ), եւ անոր առաքելութիւնն է Լոյսին ֆարոգութիւնը կատարել:

Հովհ  
ԳԸ

## ՅԱԶՈՐԴ ՇԱՔԹՈՒՄ ԺԱՆԱՆԱԿԱՅՈՂՅ

Երկուշաբթի, 07 Ապրիլ 2008  
ԱԼԵՏՈՒՄ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Երեքշաբթի, 08 Ապրիլ 2008  
10.00 > Ս. Գրային սերտոդուրին՝  
Ս. ՅԱԿՈԲ ԲՈՅՅԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Յինգշաբթի, 10 Ապրիլ 2008  
11.00 > Աղօթածողով՝  
Ս. ՅԱԿՈԲ ԲՈՅՅԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Շաբաթ, 12 Ապրիլ 2008  
18.30 > Սերտոդուրին՝  
Յայ երիտասարդներու համար

Կիրակի, 13 Ապրիլ 2008  
09.30 > Առաւօտեան ժամերգութիւն  
11.00 > Ս. Ե. Լ. Ե. Կ. Պատարագ

## ՏՆՕՐՀՆԷՔ

Արժ. Տ. Գառնիկ Բեհյ. Գոյունեան  
տ ո ս ր հ ն է ք պ ի տ ի կ ա տ ա ր է :  
Փափաքողները թող հեռաձայնեն  
**514 331 5445 x203** կամ **514 909 5203**  
թիին:

## ՍՈՒՐԲ ԶԱՏԿՈՒԱՅ ԻՒՂԱԳԻՆ

Ս. Զատկուայտօնին առթիւ, վատահենք,  
որ մեր բարեպաշտ ժողովուրդը պիտի  
չմոռնայ կատարելու ԻՒՂԱԳԻՆԻ իր  
սրտաբուխ նուիրատուութիւնը:

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻԱԲՈՐԸ ՍՈՒՐԲ Է

գոյգերու յատուկ սեմինար  
Շաբաթ 12 Ապրիլ 2008-ին

Շնորհակալութիւն հովանաւորող ամուլին՝  
ՏԵՐ ԵՆ ՏԻԿԻՆ  
ԺԻՐԱՅՐ ԵՆ ԱՆԱՅԻՍ ՇԻՐԻՆԵԱՆԻ

## ՅԻՄՆԱԾԵԱԿԻ ԴԵԱՆՈՍՈՒԹԻՒՆԵՐ ԹԻ 4

ՆԻԹ՝  
**Ս. ՅԱԿՈԲ ՀԱՄԱՅԵՐ**  
ԵՒ  
ՀԱՅԻՅ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
ՅԻՇԱՏԱԿՈՒՄ  
(50-ամեակ Ապրիլ)

ԿԸ ԴԱՍՏԱՎՈՅԷ  
Արժ. Տ. Գառնիկ Բեհյ. Գոյունեան

«Ապրիլ 24-ը մեր ազգային գոյութեան  
Զատիկը եղաւ...»

ԼՐԱ.ՔԱ.Ղ, Մարտ-Ապրիլ, 1962:

Ուրբաթ, 18 Ապրիլ, 2008,  
Ժամը 8.00-ին,  
ԵԿԵՂԵՅՈՂ ՄԷՁ:

ՅԱՏՈՒԿ ՅԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ  
ԱՐԴԻ ԹԵՍԱՆԵՐՈՎ՝  
ԱՌԱՔԵՂԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ  
ԳՐԵԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ  
ԱՍԵՆ ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 6:30